

Վ. ԽԱՐՈՒԶԻՆՍ.

ՓՈՔՐԻԿ ՏՅԻՆԳՈՒՄ
ՄԻԽԱՅԼՈՆ

891.716.
Բ-35

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1936

-6 NOV 2011

891.7145

Վ. ԽԱՐՈՒԶԻՆԱ

Խ-35

ԱՀ

ՓՈՔՐԻԿ ՏՈՒՆԳՈՒՄ ՄԻԽԱՅԼՈՆ

1002
1010
41466

Ուսաբեթից քարգմ.
Հ. Ս. Ա. Ի. Կ. Ց. Ա. Ն.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Խ. ՂԱՅ. ԲԻԲԱՆՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1936
ՀԱՅ-CCP
Հ. Խ. Պ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Պատասխ. Խմբագիր Ա. Հայրյան
Տեխ. Խմբագիր Ծ. Ճիթիրակյան
Լեզվի Խմբագիր Հ. Պետրոսյան
Մըքառէչ Մ. Գևորգյան



ՓՈՔՐԻԿ ՏՈՒՆԳՈՒՄ ՄԻԽԱՅԼՈՆ
ՊԱՏԿԵՐ ՏՈՒՆԳՈՒՄՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

I

Սրածայր ուրասաներ¹ են
այնտեղ, վորոնց ծուխը դուրս
ե գալիս ծխանցքներից։ Մո-
տերքում ել փտած ծառերում
մուլ եյին զրել։ Դրանցից
թանձր ու կծու ծուխ եր տա-
րածվում, վոր հալածում եր
մոծակներին, բոռերին ու

¹ Մառակեզերից շինած քողափեկ։

միակներին։ Այդ զգվելիներից սաստիկ տանջվում եյին և մարդիկ, և բնակատեղից վոչ այնքան հեռու արածող յեղջերուները։

Յերեխաները հավաքվեցին խաղալու։
— Ի՞նչ խաղանք։
— Յեկեք գայլ ու յեղջերու խաղանք։
— Խաղանք, խաղանք։

Գայլ դառնալու յեր փոքրիկ տունգուս Միխալոն։ Նա մյուսներից ավելի մեծ եր— ինը տարեկան, վազելում ել ճարպիկ եր։ Մոացած յերեխաները յեղջերուներ դարձան։

Յերեխաները գետնին յերկու շրջան գծեցին, այդ շրջանները փայտիկներով ցանկապատեցին։ Դրանք նրանց «լճերն» եյին։ «Գայլ» Միխայլոն պատկեց նրանց մեջտեղում։ «Յեղջերուներն» սկսեցին մի «լճից» կեալ մյուսը փախչել, իսկ «գայլը» նրանց վորոնում եր։

Անա բռնեց մի փոքրիկ տունգուսի։ Սկսեց «ուտել» նրան։ Փոքրիկը դուռը ու ճշում եր։ Միխայլոն սարսափելի դեմք եր շինել ու իբր թե կրծում եր նրան, իսկ «յեղջերուներն» ավելի համարձակ դարձած, վոր «գայլն» ուտելով եր զբաղված, ավելի հաճախ ու ավելի արագ եյին մեկ լճից մյուսը փախչում։ Միխայլոն թողեց «կերպած» յեղջերվին

և վրա պլոծավ, վոր ուրիշներին բռնի։ Ծուտով նա բոլորին բռնոտեց։

Խաղից տաքացած յերեխաները պառկեցին գռուզ, մոխրա-կանաչագույն մամուռ խոտի վրա։ Տրորված չոր խոտը խշխշում եր։ Յերեխաները շատ վազելուց շունչ առնել չեցին կարողանում։

— Հիմա ի՞նչ խաղանք։
— Յեկեք տունգուսներ ու նեններ¹ խաղանք։

— Այն, այս, տունգուսներ ու նեններ։ Յերեխաներն իրար անցան։ Աչքները վառվեցին։ Այդ նրանց սիրած խաղն եր։

Բաժանվեցին։ Վոմանք «նեններ» դարձան, վոմանք ել՝ «տունգուսներ»։ «Նենները» փախան զանազան կողմեր ու թագնվեցին։ «Ծունգուսները» վորոնում եյին թագնվածներին։ «Նեննը» վախենալով, վոր իրեն կարող են գտնել, ամեն անգամ նոր տեղ եր փախչում ու նորից թագնվում։

Այնուամենայնիվ «նենների» տեղն իմացան։ Այդ ժամանակ նրանք վազելով մի տեղ հավաքվեցին և սկսեցին «տունգուսների» վրա նետեր արձակել։ Այդ նետերը բութ ծայրերով եյին։ Սակայն նետահարված «տուն-

1. Самоеды.

գուսը» գետին եր ընկնում, ձևանալով, թե
իրը վերքից մեռնում է: «Նեննը» մոտ եր
փառում նրան, վերցնում եր նրա նետն ու
վրան ծիծաղում ասելով «գու կտրիճ չիս»:

Բոլոր «առևնդուսները» կոտորվեցին: Այդ
ժամանակ խաղը նորից սկսեցին: «Տունդու-
ներն» սկսեցին թագնվել: Հետո նրանք սկը-
սեցին նետահար անել «Նեններին»:

Թագմական տաքարյունություն բորբոք-
վեց:

— Աղեղ լարենք ու արձակենք, տեսնենք՝
ով և լավ արձակում,—ձայներ լսվեցին: Նո-
րից յերկու խմբի բաժանվեցին: Նստեցին
գետնին՝ իրար զիմաց:

Նրանց միջև յեղած տարածությունը
յզրեք—չորս սաժեն: Եր: Ուղիղ մեջտեղում
յի փայտ անկեցին: Սկսեցին նետ արձակել
փայտի վրա՝ տարբեր կողմերից: Նորից ինք-
նագործ, իրենց՝ յերեխանինետերով: Յուրաքանչյուրն
աշխատում եր իր խմբին հաղթանակ բերել:

Այս մրցությանը շատ հավանեցին նրանք
զգում եյին, վոր նետ արձակեն իրենց մեջ
ձեռքի ամրություն և աչքի ճշտություն և
դարգացնում: Իսկ դրանք չե՞ վոր տղաներին
շատ են հարկավոր:

Վերջապես հողնեցին, պառկեցին գետ-
նին: Սկսվեցին խոսակցությունները:

Խաղն այնքան աշխույժ եր անցել, վոր
նրանք իրենց շուրջը վնասացող մոծակներին
ու մակներին լավ չելին նկատել: Ասենք՝
տղաները վարժվել ելին նրանց ձանձրաց-
նող խայթումներին: Այժմ ել յերբեմն մեկն
եր ձեռքով խփում իրեն, յերբեմն մյուսը, և
ճպում մոծակը:

— Այս ամառ ի՞նչ շատ են այդ զզվելի-
ները, — ասաց նրանցից մեկը:

— Այս տարի առանձնապես շատ են:

— Յեղջերուները ծխանից չեն հեռանում,
ուրեմն մոծակներից հանգիստ չունեն:

— Գոնե մի խիստ քամի փչեր ու գարշե-
միներին հալածեր:

— Իսկ չի կարելի այնպես անել, վոր
քամի փչի:

— Ինչպես չե, — կասկածեց մի փոքրիկ
տղա:

— Այդ շատ հասարակ բան ե. հարկավոր
ե միայն մի բվի բուն գտնելու քանդել, — ասաց
նրանից ավելի մի մի տղա:

— Ճիշտ ե ասում, — մտախոհ կերպով ասաց
Միհայլոն: — Դրա մասին յես լսել եմ. պապս
ե պատմել: Շատ տարիներ առաջ այդ զզվելի-

Ներից այնքան շատ են յերկում, վոր ծխանից հեռանալ չի լինում: Յեղջերուներն սկսում են սատկել, վճռում են դրանց վրա սաստիկ քամի թողնել: Այբողջ ցեղով ժողովում ու գնում են ըփի բուն գտնելու: Գտնում ու ավերում են, Դրանից հետո սաստիկ քամի յե փչում, իսկական փոթորիկ և զգվելիները կորչում են: Մարդիկ ու յեղջերուները շունչ են քաշում:

—Իսկ ինձ ասել են, վոր իբր թե մոծակներին չպետք ե սպանել: Իբր թե՝ յեթե սպանեն, ավելի կրագմանան: Դրան դիմանալ կլինի:

—Իսկ մայրս ինձ ասել ե, վոր իբր թե պետք ե մի ճանձ բռնել ու կրակի վրա այրել: Իբր թե դրանից մոծակները կպակասեն:

Այսպես ահա՝ նրանք մեծերից լսածը հաղորդում եյին իրար:

Հանկարծ Միխայլոն հիշեց, վոր ուրասայում այժմ համեղ սուպ ե յեփում պղնձում:

Նա վեր թուավ ու վազեց տուն: Շուտով մյուսներն ել ցրվեցին:

II

Լավ ե ուրասայում: Դուրսը Միխայլոյին չի քաշում: Նա նստած ե ոջախի

մոտ: Նրա հոգը չե վողջ բնակարանը լրջված ծուխը, վոր գեպի ծխանցքն ե քաշվում: Սովորություն ե. — յեթե այս ամենորյա ծուխը չվններ, ուրասան նրան այնքան հարմար չեր թվա:

Տղան վոչնչով զբաղված չեր: Բայց այդպես յերկար մնալ չեր կարող: Ուր վոր ե՝ վեր կթոշի ու մի տեղ կվաղի — նրն ոգնելու կամ լնկերների հետ խաղալու: Իսկ այժմ լուսթյան ու մտածմունքի րոպե յեր:

Տղան, աչքերը կկոցած, ոջախում վառվող կրակին ե նայում, նրան այնպես ե թվում, թե ուր վոր ե՝ կտեմնի կրակի «տիրոջը» (վոգուն). Մեծերը նրան ասել եյին, թե նա ապրում ե այստեղ, բոցերի մեջ: Իսկ նրա կինը — ոջախի տիրուհին — ապրում ե մոխրի տակ: «Կրակի տերը» մարդկանց փրկում ե ձմեռվա ցրտից, կերակուր ե յեփում, իսկ «ոջախի տիրուհին»՝ ուրասայում ապրողների տոռողջությունն ու բարեկեցությունն ե պահպանում: Զուրչե, վոր տունքուսները հարգում են նրանց, զուրչե, վոր խնդրում են նրանց խորհուրդներ տալ, սակայն դու յերբեք նրանց չես տեսնի:

«Գոնե մեկ անգամ կարելի լիներ տեսնել նրանց», — մտածում ե Միխայլոն:

Հույսից աչքերը կկոցելով՝ նա բոցեղեն լեզուների միջից բնակարանի ծանոթ կահավորությունն եւ տեսնում. ծանոթ, սովորական — դրա համար ել սիրելի: Տղան վորքան հիշում ե իրեն, այդ կահավարությունը միշտ նույնն ե յեղել:

Այն որից, յերբ Միխայլոն հիշում ե իրեն, շատ անգամ են քոչել, շատ կայաններ են փոխել շատ անգամ են ուրասան դաշտել՝ ճանապարհի համար: Աակայն ամեն անգամ, նոր կայան հասնելիս, ուրասան նույն ձեռվ են սարքել — շուրջը ձողերն այնպես են տնկոտել, վոր նրանք վերևում միացել են իրար և ձողերից շինած այս քողափել ծածկել են կամ կեչի ծառի յեփ տված կեղեռվ կամ զամշով: Ուրասայի կենտրոնում փոս ելին շինում՝ ոջախի համար և չորս կողմը քարով պատում ելին: Ոջախի վերում կեռավոր ձողեր ելին դցում՝ կերակրով պղինձներ կախ տալու համար:

Միխայլոն աչքերը կկոցելով՝ կրակի ու ծխի միջից տեսնում եր այդ ձողերն ու կեռերը: Նրանք հասարակ բաներ չելին, նրոնք բնակարանի սրբություններն ելին համարիում:

Միխայլոն ուրասայում նստածներին ել

եր տեսնում: Դրանիք մերձավորներ, թանկագին անձնավորություններ ելին՝ կյանքի առաջին տարիներից ծանոթ:

Ոջախի մոտ նստած եր ծերունի, կնճիռներով ծածկված պապը: Նա աջ ձեռքի արմունկը հենել եր ծնկան, իսկ գլուխը զրել եր ափի մեջ: Վերջերս նա անառողջ եր — ծերացել եր: Այլև յեղիներուներ վորսալու չեր գնում, վորսի հրացանն ընկած եր անգործ: Միխայլոն նայում եր պապիկին. և վորքան սիրելի յեր ծեր պապիկը: Ոջախի մյուս կողմում, այսպես կոչված «կինալմատի տեղում», մայրն զբաղված եր գործով, — կեչու կեղեկից աման եր կարում: ամուր, անջրանցիկ աման, վորի մեջ կաթ և ջուր կարելի յեր պահեր: Հենց այստեղ ել Միխայլոյի քույրիկը, նաստայան, բոլոր ուժով աշխատում եր նույն անել, ինչ վոր մայրն եր անում: Բայց դեռ անշնորհք կերպով եր անում, միայն կեղեկի կտորտանքն եր կողմ-կոյու անում:

Որորոցում, յեղիների մորթում փաթաթած, պառկած եր մյուս փոքրիկ քույրը — փոքրիկ փոքրիկ, ծիծաղելի:

Մեկ տարի առաջ հենց նույն որորոցում փոքրիկ յեղայրն եր պառկած: Միխայլոն

լավ ե հիշում, թե յեղբայրիկն ինչպես հիվանդացավ ու մեռավ։ Այն ժամանակ դարպատել եր մայրը, մինչև որս ել դարդ ե անում։ Ինչպես յերեռմ ե՝ նա փոքրիկն չի մոռանալու։

Միխայլոն նստել ու միտք ե անում։ Հանկարծ ցնցվեց։ Դրսեռում լսվեց փոքրիկ, զեղնափետուր թռչունի—չիչակի ճիչը։ Այս—հավատացած եր Միխալոն—փոքրիկ յեղբայրն ե, վոր մոտ ե թռել իրենց ուրա-



սային։ Մեռած յերեխան, հավատում են տունգուսները, փոխարկվում ե փոքրիկ թըռչունի և թռչում «վերին աշխարհ»։ Այնտեղից նա յերբեմն թռչում, գալիս ե հարացատներին աեսնելու։

Մայրը նույնպես ցնցվեց։ Վեր կացավ և ուրասայից շտապ դուրս յեկավ։ Միխայլոն նրա յետեից գնաց, ինքը հենց փոքրիկ յեղբոր մասին եր մտածում, — նա յել թռել, յեկել ե։ Այս միտքը նրան ուրախություն պատճառեց։

Նա հենց ախտեղ եր ուզում վագել, փորտեղից թռչնիկի ճիչը լսվեց։ Սակայն մորը նայելով՝ կանգ առավ։

Մայրը կանգնած եր անշարժ, լարված, առանց աշքն այստեղից հեռացնելու, վորտեղից ճիչն եր լսվել։ Նա հանկարծ դառնագին փողբով պատապիսանեց այդ ճիչին։

— Ճուռտիկս, ճուախիկս, վորքան ծանր, վորքան դառն ե ինձ համար։

Չիչակ թռչնիկը մի քանի անգամ տեղից աեղ թռավ, Մայրը հետեւում եր նրան առանց աշքը նրանից հեռացնելու։ Նա լսողություն դարձած՝ աշխատառում եր հասկանալ, թե իր ճիչով ինչ ե ուզում ասել թռչնիկը։ Նա հետեւում եր թռչնիկին, ժա-

մանսակ առ ժամանակ ել դառնազին կերպով
պատասխանում եր նրան:

Զիշակ-թռչնիկը մի անգամ ել ճշաց —
կարծես հրաժեշտ եր տալիս — և թռավ,
հեռացավ:

Մայրը յերկար մնացել եր իր տեղում
կանգնած՝ թռչունի յետեից նայելիս: Հետո
դանդաղ կերպով մտավ ուրասա:

Իսկ Միխայլոն մնացել եր կանգնած: Նա
չփառեր՝ ինչ աներ: Մտքերն ու զգացմունք-
ները մութն եյին և տղոտ: Հանկարծ տեսավ
տուն վերադարձող հորն ու վագեց նրա մոտ:

III

Պապն անշարժ նստած եր ոջախի մոտ:
Նա գլուխը բռնել եր աջ ձեռքի ափով,
իսկ արմունկը հենել եր ծնկանը: Այսպես
նա ամբողջ որերով եր նստում: Ամենքն ել
տեսնում եյին, վոր նա որից-որ թուլա-
նում ե, վոր համնում ե նրա յերկար ճանա-
պարհի — «մեռածների աշխարհի» համար
պատրաստվելու ժամանակը:

Պապը պատրաստվում եր դրա համար՝
բութ ու հանգիստ կերպով:

Նա լուս կերպով կրակի մոտ նստած՝
հիշում եր անցյալը: Հիշում եր, թե ինչպես

ինքն ել ջահել եր, ինչ արագ քայլող ու
ձարպիկ վորսորդ եր: Հիշում եր այնքան
սիրած յեղերուներին, այն աղջկանը, վորի
հետ ինքը նշանվել եր, վորի հետ այնքան տա-
րի ապրեց: Հիշում եր, թե ինչպես մեծա-
ցան իր տղաները, ինչպիսի կտրիճներ դար-
ձան, ինչպես ինքը բաժանեց նրանց, իսկ
ինքը մնաց ապրելու Միխայլոյի հոր հետ:

Հենց այգուեղ ել տնեցիք եյին նստած՝
ամեն մեկն իր գործին: Կարծես ծերունուն
չեյին նկատում, նրա մտքերը չեյին ուզում
իւանգարել: Միխայլոն արդեն վաղուց չեր
խանգարում նրան: Ակամա հեռանում եր
նրանից, թե ինչն ել չգիտեր: Իսկ
նրա պատմվածքները Միխայլոն սիրում եր
լսել — թե ինչպես եր նա արջերի վործը
բարձրանում, դահուկներով վայրի յեղերու-
ների յետեից ընկնում:

Հանկարծ պատավ պապն սկսեց խոսել:
Բոլորը լուեցին: Լսում եյին:

— Յե՞րբ եք մտածում քոչել:

Հասկացան նրան ու հայացքները գետ-
նին հառեցին:

— Դե լավ, վաղվա բան հո չե, գեռ
կսպասենք, — պատասխանեց Միխայլոյի
հայրը:

— Իսկ յեղջերուների կերը կրավակիւնանա, բոլոր մամռախոտը հո չեն կերել:

— Դե լավ, կրավականանա, դու մի անհանգստանա:

— Ինձ մի սպասեք, գնացեք: Ինչու պետք ե ձեզ խանդարեմ, առանց ձեզ ել կմեռնեմ:

— Զուր ես այդպես ասում, — ասաց Միխայլոյի հայրը: — Չենք թողնի, վոր միայնակ մեռնես:

Առաջ այդպիսի սովորություն կար — ծերունիներին ու հիվանդներին ճանապարհին եյին թողնում: Վատ սովորություն եր:

Ամենքը լուս եյին, Յուրաքանչյուրն իր գործն եր անում: Կարծես առանձին բան չեր ասվել: Սակայն Միխայլոյի սիրտը ձմլվեց:

Յերկու որ անցավ, Պատին արդեն պառկել եր կրակի մոտ ու չեր վեր կենում: Հարևան ուրասաներից գալիս եյին մեռնովին տեսնելու, նրան հրաժեշտ առաջաւ:

Պատին ամենքին հրաժեշտ տվեց: Վորդուն յեղջերուների տնտեսությանը վերաբերող խորհուրդներ տվեց: Նա մեռնում եր, սակայն հիշում եր յեղջերուներից յուրաքանչյուրին:

— Միխայլոյից լավ վորտորդ պատրաստիր, — ասաց նա թուլացող ձայնով:

Մի փոքր լոեց: Հետո նորից խոսեց:

— Հեռանում եմ ձեզանից: Հեռու ճանապարհ ունեմ անցնելու: Գնալու յեմ կեսպիշերային աշխարհը, մեռելների աշխարհը:

Նրա ձայնը հետզհետե թուլանում եր: Այլև դժվար եր լինում նրան լսել:


— Ինձ համար չտիրեք, շատ լաց չինեք: Յեթե ինձ համար շատ արտասուք թափեք, վրաս կընկնեն, հագուստս կթրջվի: Ճանապարհիս կարող ե հանկարծ հյուսիսային քամի փշել, հագուստս կսառցակալի, առաջ գնալս կդժվարանա:

Լոեց: Հետո հազիվ լսելի եյին այս խոսքերը.

— Շտապում եմ հեռանալ ձեզնից: Մեռածների աշխարհում կհանդիպեմ իմոնց... Ուրասա կշինեմ, մեջը պառավիս հետ կապրեմ... Յեղջերուներ կունենանք, շատ, շատ յեղջերուներ...

Ենի պապը մեռավ:

Սկսեցին թաղման ծեսը: Միխայլոն այդ բոլորի վրա տարօրինակ հետաքրքրությամբ եր նայում: Պատին հագնում եյին յերկար ճանապարհի, անհայտ աշխարհի համար:



Այն պապին, վոր գեռ մի փոքր առաջ
կենդանի յերև և առողջ, վոր կարողանում
եր այնքան լավ պատմել, թե ինչպես եյին
ապրում առաջ:

Մինչև այժմ Միխայլոն իրենց ընտանի-
քում միայն մեկ մահ եր տեսել — փոքրիկ
յեղբոր մահը: Այն ժամանակ փոքրիկ յեղ-
բորը դրին փորած կոճղի մեջ ու անտա-
ռում ծառից կախ տվին: Պատճ ասում եր, վոր
առաջներում հասակավորներին ել եյին այդ-
պես թաղումք իսկ այժմ հասակավորներին
այլ կերպ են թաղումք:

Ամենից առաջ պապի մարմինն այնպես
դրին, վոր գլուխը զեպի հյուսիս լինի: — Հե-
տո նա զեպի կես գիշերային աշխարհն եր
զնում: Հետո ել նոր շորեր հազցրին և փաթա-
թեցին մի ծածկոցում, վոր պետք եր գալու-
ուրասայի համար: Զե վոր նրանք հավա-
տում եյին, վոր այնտեղ, մեռելների աշ-
խարհը հասնելուն պես, նա իր համար քնակա-
րան եր շինելու: Հենց դրա համար ել պետք
եր ուրասայի համար պատրաստի ծածկոց
տալ, փորպեսզի դրա պատրաստելու վրա նա
ժամանակ չկորցներ:

Հրաժեշտի բոպեն հասավ:

Միխայլոյի մայրն որորոցից վերցրեց

փոքրիկին, բարձրացրեց պապի վրա ու
ասաց:

— Այժմ գնա, ուր գնում ես: Յերեխա-
ներիս ձեռք չտաս: — Յեվ նա հոգատար հա-
յացք զցեց Միխայլոյի ու Նաստասյայի
վրա: — Մի տիսրի, դարդ մի անի, գնա, յետ
չնայես: Յերեխաներն — իմն են: Դու վոչինչ
չունես, և քո բանն այժմ լավ ե:

Այսպես եր ասում նա՝ դաւնալով հան-
գուցյալին՝ նրանից պահպանելով իր յերե-
խաներին: Վախենում եր, չինի թե նրանցից
մեկնումեկին իր յետելից տաներ:

Սկսեցին հանգուցյալին դուրս բերել:
Ուրասայի ծածկոցում հյուսիսային կողմից
անցք բաց արին: Այդ անցքով ել դուրս բե-
րին մարմինը: Մեռելին ուրասայի դոնով
չեն դուրս բերում:

Լաց ու աղաղակ բարձրացավ: Սուզ ու
շիվան եյին անում:

— Դու գնում ես զիշերվակողմը: Ինչու
յես գնում: Վարքան տխուր, վորքան ծանր
ե մեզ համար...

Վողբերը ցնցում եյին: Միխայլոն, իրեն
համար անսպասելի կերպով, սկսեց մյուս-
ների յետեկից վողբալ ու սպալ նրանց բա-
ռերն ել գործ ածում:

— ինչու վնացիր, ինչու թսղեցիր: Այժմ
առանց քեզ ի՞նչպես պետք եւ ապրենք:

Ուրասալի առաջ բավական վատ սահ-
նակ եր կանգնած, վորին մի յեղջերու յեր
լծված: Այդ սահնակի վրա յել դրին հան-
գուցյալին: Թաղման թափորը (յերթը) շրթ-
վեց դեպի անտառի այն տեղը, ուր գերեզ-
ման եր պատրաստված:

Ճանապարհին մի քանի անգամ կանգ
առան: Դրանով հանգիստ եյին տալիս հան-
գուցյալին: Այդպես եյին ասում:

Վերջապես յեկան զերեզմանի մոտ:
Նևեցյալին սահնակի վրայից վերցրին: Կտրը-
տեցին այն փոկերը, վորոնցովնա փաթաթած
եր: Գերեզման իջեցրին: Հետը հաց, գավաթ
և գդալ դրին, վորպեսդի նա ճանապարհին
կարողանա կերպակրով իրեն կազդուրել:

Գերեզմանը ծածկեցին: Վրան դրին այն
սահնակը, վորով բերել ելին մեռելին: Սկըզ-
բում դեռ կոտրեցին: Սովորությունն այդպես
եր—հանգուցյալի բոլոր իրերն սկզբում կո-
տրըտում, «մեւցնում» են, իսկ հետո դար-
սում են զերեզմանի մոտ:

Դրանից հետո սպանեցին այն յեղջերին,
վորով բերել ելին ննջեցյալին: Սպանելով
պառկեցրին գետնին, դլուխը դեպի հյուսիս:

Թող իր ճանապարհը վիտենա: ԶԵ վոր
սրանից հետո նա յե մեռելին կիսագիշեր
աշխարհը տանելու—մեռածների աշխարհը,
ուր մեռելներն ապրում են վորպես կեն-
դանիներ: Մեռած յեղջերուն մեռելների աշ-
խարհն ետանելու մեռածին՝ ջարդած, «մեոց-
րած», սահնակով: Հետները վերցնում են
հանգուցյալի բոլոր ջարդած—«մեոցրած»
իրերը:

Թաղումը կատարեցին՝ ինչպես վայել եր:
Վերադարձան տուն—կայանը:

Միխայլոյին ուրասան դատարկ եր
թփում: կարծես մի բան պակասել եր:

Սակայն ժամանակ չկար մտածելու, թե
սիրան ինչու յեր ճմլում: Զորս կողմում
արագ հավաք եր կատարվում: Ամբողջ կայանն
եր տեղահան լինում:—նոր տեղ եյին քո-
չում:

Քոչելու մասին վաղուց եյին մտածում:—
յեղջերուները շրջակայքի մամուախոսը վա-
ղուց եյին կերել ու տրորել: Միայն թե մե-
ռած պապին թողնելին եր մեղք: Իսկ այժմ
պետք եր շտապել: Տունգումների հավա-
տալիքներով լավ չե մնալ այնաեղ, ուր մեկը
մեռել եւ Այդպիսի տեղից վորքան շուտ
բոչես, այնքան լավ:

Ծղամարդիկ սկսեցին յեղջերուները ժողովել Միխայլոն, մյուս տղաների հետ միասին, ոգնում եր, վորքան կարող եր, իսկ կանալք այդ ժամանակ ուրասաներն եյին քանդում: Նրանք պոկում եյին նրանց ծածկոցները, փաթաթում ու յեղջերուներին եյին բարձում: Նոր տեղը գան թե չե, տղամարդիկ իսկույն թեք տնկած ձողերի վրա նրանց կմախքը կառուցեն, իսկ կանալք այդ կմախքը ծածկոցով կպատեն—և բնակարանն արդեն պատրաստ կլինի:

Մինչդեռ մայրն զբաղված եր ուրասայի ծածկոցով և տան իրերն եր դարսում յեղջերամորթով պատած կեչեկնեկ տոպրակներում, նաստասյան որորոցում պառկած քույրիկին եր հսկում, վորն անտեղյակ իրեն սպասող ճանապարհորդությանը—հանդիսանքնած եր: Նա հանգիստ մնաց նաև այն ժամանակ, յերբ, տաք ու փափուկ որորոցում, կապեցին մի յեղջերվի: Համաշափ քայլվածքով գնում եր յեղջերուն, հետն ել ճոճում որորոցը: Չափված շարժումն որորում եր նրան, և նա քնում եր:

Միխայլոն ու նաստասյան գնում եյին յեղջերուներին հեծած: Նաստասյան իր յեղջերուն յերեխային մոտ եր պահում ու շա-

րունակ հոգատար կերպով որորոցին եր նայում:

Այսպես ճանապարհ ընկավ հեծնելու և բեռնատար յեղջերուների գնացքը: Յեղջերուները զարդարված ելին: Միքանիսի ականջներից թելեր եյին անցկացրել ու թելերից բուշեր կախված: Մի քանիսի յեղջյուրներին ել գույնգույն լաթեր եյին կապկպեր: Յերբեմն հեծվորը կունում եր դեպի յեղջերուն, վորպեսզի քաղցր խոսք ասեր նրան: Իսկ յեղջերուներն, — ասում են տունգուսները, — մարդու պես ամեն ինչ հասկանում են:

IV

Յերկար, ճանճրավի լինելու չափ յերկար տևեց ձմեռը: Խավարի թագավորություն եր: Սրել չնը յերեռում: Միայն թեթև կարմրություն եր փովում յերկնակամարի վրա, սակայն փոխարենն աստղերն անսովոր վառ եյին փայլում զիշերները: Ժամանակ առ ժամանակ հյուսիսափայլի շողողուն ճառագայթներն եյին ձգվում յերկնքով: Նրանք անհանգիստ զգացմունք եյին առաջացնում թե մարդկանց, թե կենդանիների մեջ:

Սառնամանիքներն այնքան եյին դաժան,

վոր յերկաթն⁹ ապակու պես փխրուն եր դառնում, իսկ թաց փայտը յերկաթի պես ամբանում եր: Հողը ճաքճքում, լայն ճեղքվածքներ եր եր տալիս: Այսպիսի ցրտերի ժամանակ ճամբորդն իր ոեփական շնչառությունից անվերջ խշոց եր լսում:

Ցերեմն ել բուք եր առաջանում: Մառախուղը պատում եր յերկինքը: Սաստիկ քամին ողը լցնում եր ձյունի փաթիլներով: Մեզն անթափանցիկ եր դառնում: Ողը լցվում եր մըրկի սարսափելի վոռնոցով:

Քոչում եյին հուսային քամիներից պաշտպանված տեղեր: Տեղից տեղ քոչելը դժվար եր լինում:

Ցերեմն գետերի յերեսին, ձյունի շերտի տակ ջուր եր կանգնում: Այդպիսի տեղերում սահնակների սլկաններն ու յեղջերուների վոտները սառցալարում եյին: Հարկ եր լինում քերել սլկաններն ու թաղիքով պատել կենդանիների սառցակալած վոտները: Ցերեմն տեղից տեղ քոչողներին վոթորիկ եր վրա հասնում: Նա վայր եր գցում յեղջերուներին ու շուռ եր տալիս սահնակները:

Բուքի ժամանակ մարդիկ ամբողջովին վստահում եյին յեղջերուների միանգամայն ճիշտ բնապղին, և այդ կենդանիները նրանց



ապահով տեղ եյին դուրս բերում: Բայց պատահում ել եր, վոր առաջ գնալը միանգամայն անկարելի յեր դառնում: Այդպիսի դեպքերում յեղջերուներին արձակում ու ազատ եյին թողնում: Զյունի փաթիլները ծածկում եյին թե յեղջերու, թե սահնակ:

Զյունի տակ պառկելը սարսափելի յեր։
Յեթե բուքից հետո հյուսիսային սառցնող
քամին փշեր, կարելի յեր կենդանի թաղ-
ված մալ սպասած ձյունի տակ։

Այսուամենայնիվ, չնայելով դժվարու-
թյուններին ու վտանգներին, տեղից-տեղ
քոչելն ուրախ եր անցնում: Տղամարդիկ ու
կանայք իրենց ամենալավ զգեստներն եյին
հագնում: Նրանց բարձրագոչ ճիշը հեռու-
ներն եր հասնում:

Նախ քան ճանապարհ ընկնելը, ջահել
տղաները չներն առած, գնում եյին առաջ,
դեպի յեղջերուները և հոտը քշում եյին այն
ճանապարհը, վորով գնացըը պետք և շարժվեր։
Առջեկց գնում եյին մեծերը, նրանց հետևում
եր յեղջերուների հոտը։ Վերջից գնում եյին
կանայք՝ տան յեղած-չեղածովի Յերկու կող-
մերում ջիգիտ եյին խաղում աղջիկները։

Գնացքի մեջտեղում սահնակներ կային,
վորոնց սպիտակ յեղջերուներ եյին լծված։
Դրանք սրբազն սահնակներ եյին։ Դրան-
ցով տանու կուռքերն եյին տեղափոխում։
Այն կուռքերը, վորոնք իբր թե (այդպես եյին
հավատում առևտունները) հովանավորում
եյին մարդկանց, ոգնում եյին նրանց վորսի
ժամանակ, բարեկեցություն եյին բերում



նրանց։ Այդ պատճառով ել նրանց «կերակ-
րում» եյին, - յուրաքանչյուր նորալուսնի կամ
հաջող վորսից վերադառնալիս, ոծում եյին
արյունով, ճարպով կամ վորսի ուղեղով, կամ
վյարի յեղջերկի այրած ճարպի ծխով ծուխ
եյին տալիս։

Բայց ահա ձմեռվա յերկար գիշերն անցավ։
Մի գեղեցիկ որ, յերկնքում ձեղք տվավ մի
լույսի նեղ շերտ, ամպերը վառվեցին ծիրա-
նագույն կարմիր լուսով, վորի ցոլքը ճառա-
գալթանման անցավ ամբողջ յերկնակամա-
րով։ Դուրս նայեց շացուցիչ վառ արևը։ Նա

միայն մեկ բոպե դուրս նայեց, վորից հետո
թագնվեց յերկրի յերեսին փոփող մառա-
խուղի յետևում: Իսկ յերկնքում չքնաղ լու-
սածազը վառվեց, վոր ողը լցրեց վարդա-
գույն լուսով: Հենց այն տեղում, ուր արել
թագնվեց, դեռ յերկար-յերկար ծիածանի
գույներիքծերն եյին խաղում:

Արև սիայն մեկ բոպե դուրս նայեց,
բայց նա բոլորին ուրախության, լույսի
ու կյանքի հույս բերեց:

Տունգումները դուրս յեկան իրենց բնա-
կարաններից, յերեք անդամ յերկրպագու-
թյուն տվին և դառնալով գեպի արեն ասացին.

— Արև, բարեհաջող որեր տուր՝ ապրելու,
մեր շունչն ու կյանքը պահպանիր, յերջան-
կություն, բարեկեցություն շնորհիր, հետա-
գայում չիտղնես մեզ:

Այսպէս եյին վողջունում նրանք արևի
յերեալը:

Ցուրտ, մթին ձմեռն իր տեղը շուտ զիջեց
գարնանը: Իսկ զարունը բուռն թափով ծա-
վալվեց: Գետինը ծածկվեց կանաչով, ծաղիկ-
ները գունագեղ փայլ տվին, խեժափիճին
նոր, բաց-կանաչ քնքույշ վշատերեներ ար-
ձակեց, սպիտակ խնկենու հոտն աշխարհը
բռնեց:

Լճերում ու գետակներում սկսեցին սագեր,
բաղեր, կարապներ ու սուզահավքեր վխտալ:
Ամեն տեղ կյանքը յեռում եր, կարծես
գիտեր, վոր իրեն քիչ ժամանակ ե տրամա-
դրած. վոր հեռու չեն աշունը, խավարն ու
ձմեռվա սառնամանիքները:

V

Միևայլոն իր ամբողջ կյանքում հիշում
եր, թե այդ գժբախտությունն ինչպես սկըս-
վեց:

Ձմեռը, յեղջերուների համար լավ արոտ-
ներ վնասուելով, քոչեքոչում եյին անցկաց-
նում: Նրանք հարուստ եյին, յեղջերուներ
շատ ունեցին: Գարունը վրա հասավ և նրանք
շարժվեցին գեպի այն տեղերն, ուր գետակ-
ներ ու լճեր կային: — ամառն այդ տեղերում
ձուկ վրսալու եյին գնում:

Պետք յեղավ գետն անցնել: Նրա վրայի
սառույցն այլևս ամուր չեր, Սաոցի վրայով
անցնում եյին ձողերին հենած, թոկից բըռ-
նած:

Որորոցը, յերեխայով մեկտեղ, յերկար
թոկերով կապել եյին յեղջերուներին: Յեղ-
ջերուներն զգույշ կերպով վոտ փոխելով՝
քաշում եյին կեչեկեղեկ տուփը՝ յերեխա-

յով մեկտեղ։ Մոտիկից գնում եր Միխայլոյի մայրը։ Նրանից քայլ անդամ յետ չեր մնում Նաստայան։

Վերջապես մյուս ափը հասան։ Գետանցը դժվար եր։ Մասուցը ճրճում և մարդկանց ու յեղջերուների վոտների տակ կորանում եր։ Միխայլոն վտանգը գիտակցում եր, բայց չեր վախենում։ Մրատու ու անվախ են տունգումները։ Նրանք յերեխայությունից են փորձանքների վարժվում։

Մարդիկ լծկան յեղջերուների հետ միասին անփորձ անցան։ Նրանց յետեից հոտը շարժվեց։

Հենց այստեղ ել փորձանք պատահեց։ Մասուցը չղիմացավ, կոտրվեց։ Յեղջերուներն ամեն կերպ աշխատում եյին դուրս գալ։ Միքանիսը մի կերպ դուրս յեկան, բայց շատերը սառցի տակ անցան ու վոչընչացան։ Մանավանդ ձագեր շատ վոչնչացան։ Նրանք դեռ շատ թույլ եյին։

Սակայն այս դեռ փորձանքի սկիզբն եր։

Յեղջերուների պակասելն զգալի յեր Բայց և այնպես Միխայլոյի հորը, Յեգորին, առաջի պես կարելի յեր «շատ յեղջերունեցող» անվանել։ Նրա հոտերը մեծ եյին։ Հանկարծ Յեգորի յեղջերուները համա-

ճարակով բոնվեցին։ Նրանք մեկը մյոււսի յետեկից հիվանդացան։ Նրանց վոտներին, սմբակների մոտ, թարախոտ վերքեր եյին յերեւում։ Վտաները սաստիկ ուռչում եյին։ Այդ հիվանդության առաջ տունգումներն անոգնական են, բժշկել չեն կարողանում։ Հիվանդացած յեղջերուները սատկում եյին։ Հիվանդությունը տարածվում եր։

Յեղջերուների հոտերի մոտ մեծացած Միխայլոն լավ եր հասկանում, թե այդ ինչով և վերջանալու։

Յեվ ահա մի որ ուրասայում այնպիսի բառեր հնչեցին, վորոնք բոլորի մտքում կային. Նրանք բոլորի հոգին հուզեցին։

— Մենք աղքատացել ենք։

— Մենք աղքատացել ենք,—ասաց Յեղորը։ Յես այլևս նախակին մեծ հոտերը չունեմ։ Յեղջերուներիս մեկ տասերորդ մասն ե միայն մնացել։ Դե ի՞նչ արած։ Մենք ել վորսորդությամբ ու ձկնօրսությամբ կապրենք։ Ժամանակն ե, Միխայլոն, վոր դու վորսորդության վարժվես։ Քեզանից յես լավ վորսորդ կպատրաստեմ։

— Իսկ յես և դու, Նաստայա,—ասաց Միխայլոյի մայրն իր աղջկան,—ձմեռվա համար ավելի շատ պաշար կպատրաստենք ու

չենք քաղցի։ Առանց յեղջերուների յոլա
կզնանք։ Դու այժմ արդեն մեծացել ես ու
իմ ոգնականը կդառնա։

Նաստայան վոչինչ չտաց։ Միայն նրա
սե, խելացի ու արագաշարժ աչքերը փայ-
լիցին։ Նա իրեն հպարտ եր զգում։ Առաջ
ել եր մորն ոգնում, սակայն այդ միայն
զվարձության համար եր։ Այժմ նրա վրա
պարտականություն եյին զնում։ Նա փոք-
րիկ աղջիկ եր, սակայն այժմ համարյա մեծ
եր համարում իրեն, վոր աշխատում եր ըն-
տանիքը կերակրելու։

Իսկ Միխալով դուրս վաղեց ուրախալից
և ուրախ կերպով սկսեց պտտվել, ցատկո-
ւել ու թռչկոտալ։ Նրան թվում եր, թե ինքն
արդեն ճարպիկ ու քաջ վորսորդ ե դար-
ձել. —ահա արջին կհանի իր վորջից, կըս-
պանի նրան ու կհոչակի։ Յեվ համարձակ
վորսորդական սխրագործության կանխա-
վայելումը նրան հպարտ եր դարձնում։

VI

Նաստայան մոր և ուրիշ կանանց հետ
նստած եր բոնած ու ափը գցած ձկների մի
մեծ կուլտի առաջ։ Որորի վրա տղամար-
դիկ ձուկ եյին վորսում, իսկ կանայք իրենց

դործն եյին տեսնում. —ձմեռվա համար ձկան
պաշար եյին պատրաստում։

Աշխատանքը նաստայայի համար նոր
բան չեր։ Իր կյանքի դեռ առաջին տարի-
ներից եր նա իր խելացի ու կենդանի աշ-
քերով դիտել այն ամենն, ինչ վոր անում
եյին մայրն ու մյուս կանայք։ Բայց պա-
տահում եր, վոր նայում եր, նայում, մի
վորեւե բանում ել ոգնում եր, հետո զուրս
եր վազում՝ մյուս յերեխաների հետ խա-
ղալու։ Իսկ այժմ նա իրեն իսկական աշ-
խատավորուհի յեր համարում։ Նա գիտեր,
վոր իր ոգնությունը ևս հարկավոր եւ

Զուկ անչափ շատ կար այն ճռում, վորի
մոտ եր քոչել Յեգորը։ Հոտի վոչչանալով
շատ բանվորական ձեռներ ազատվեցին, վո-
րոնք առաջ յեղջերուների մասին եյին հո-
գում։ Տղամարդիկ սկսեցին գլխովին ձկնոր-
սական արդյունաբերությամբ զբաղվել։ Կա-
նայք իրենց աշխատանքով նրանց յետեկից
հազիվ եյին հասնում։

Կանայք վարժ ձեռքերով կույտի միջից
արագ բռնում եյին մեծ ձուկը, կիսում եյին,
գլուխը կտրում, փորոտիքը հանում, և վրան
յերկայնքին ու լայնքին կտրվածքներ եյին
անում։ Հետո կեսից բաց արած ձկները

զույգ՝ զույգ կապոտում և փուռում եյին արել
տակ:

Պատրաստած և արել տակ չորացրած
ձուկը «յուկոլա» յե կոչվում: Սրեսոտ յե-
ղանակին յուկոլան պատրաստվում է 5—6
որում: Սակայն հակառակի պես հենց ամ-
պամած որեր եյին անում, այդ պատճառով
ել ստիպված եյին լինում յուկոլան կրակի




մոտ չորացնել:
Այդ նպատակի
համար տղամար-
դիկ կեղևածածկ
հատուկ շվաքա-
րան եյին շնուռմ:

Յուկոլայի
վրա, յերբ նա
յերկար ժամանակ
չի չորանում, սո-
վորաբար ճանճեր
են նոտում, վո-
րոնք յուկոլայում
իրենց ձվիկներն
են դնում: Նաս-

տասյան ստիպված եր լինում չորացնել ու
համար կախած ձուկը շարունակ մաքրել
այդ ձվիկներից: Յեթե յուկոլան այդ ձվիկ-
ներից չմաքրեյին, միքանի որից հետո
նրանից միայն կաշին կմնար:

Կանայք մի այլ տեսակի ձկնապաշար ել
եյին պատրաստում, վորն, այսպես կոչված,
պորսա յեր կոչվում: Զկան գլուխը կտրում,
փորստիքը դեն եյին գցում, իսկ ձկնկիթը
թողնում ելին: Զուկը պղինձներում յեփում,
հետո տրորում եյին կեչեկեղեկի ամաններում:



Փշերը դեն եյին գցում, իսկ ստացված զիս-
թը բարակ շերտով փռում եյին տախտակի
վրա: Տախտակը դնում եյին կրակի մոտ:
Այդ շփոթը կրակի վրա մի քիչ տաքացնե-
լուց հետո, մանր կտրառում, կեչեկեղեկի վրա
փռում ու բոլորովին չորացնում եյին արեի
տակ:

Նաստասյան ձուկը ձեռքերով ուրախու-
թյամբ եր տրորում,— գործն այդպես ել
առաջ եր գնում, իսկ հետո, յերբ պոր-
սան կտրառում եյին, և յերբ որվա ըն-
թացքում նա չորանում եր արեի տակ,
աղջիկն ընկերուհիների հետ միասին, ինչպես
ել լիներ, մի կտոր պորսա յեր բերանը
գցում: Հոգ չեր, վոր նա դեռ պատրաստ
չեր: Նաստասյային այդ առանձնապես համեղ
եր թվում:

Մթերեկու համար պատրաստած ուտե-
լիքը դարսում եյին շտեմարաններում: Գա-
ղաններից պաշտպանելու համար այդ ամ-
բարները շինում եյին ցցերի վրա:

Հենց վոր աշունքանուժ եր, սկսում եյին
հորեր քանդել: Հորերում նույնպես մթերք
եյին պահում: Չուկը հորն եյին լցնում,
առանց մաքրելու, ամբողջ վիճակում: Չուկը
փոռում եր, իսկ դրա վրա վոչ վոք ուշա-

դրություն չեր
դարձնում: Տուն-
գուսները սովոր
են փշացած ձուկն
այնպես ուտել
ինչպես թարմն են
ուտում:

Մի քանի հոր
լցրին սպանած
թռչուններով: Յե-
րեք չորս վասկ-
րահան արած սա-
դերի միսը կարե-
ցին սագերի կաշ-
վի մեջ այնպես ամուր դարսած, վոր մեջն
ող չանցներ: Մի քանի այսպիսի փոքրիկ
կապոց դարսեցին հորի մեջ, իսկ հորը ծած-
կեցին մամուռով:

Դեռ կանացի ամառային մի գործ ել
կար, վոր Նաստասյան շատ եր սիրում: Հա-
տապտուղ ժողովելն եր այդ: Շուրջը հատա-
պտուղ շատ կար — հապալաս, շիկա և այլն:
Վարքան լավ եր — նստել հապալասենու ա-
ռաջ, պտուղներ ժողովել, միաժամանակ չմո-
ռանալ մեկ-մեկ ել այդ պտուղներից բերանը
դցել: Կարծես վառ կարմիր հապալասը ժըպ-



տում եր աղջկան: Այնքան հատապտուղ կար,
վոր ժողովելը դժվար չեր: Յեկ յեթե նրան
հատապտղի եյին ուղարկում, պետք եր
շատ ժողովել: Զե վոր հատապտուղները
կերակրի համար վորպես համեմունք եյին
ծառայում, բացի դրանից՝ հատապտուղներ
ել պետք եր մժերել:

Նաստասյան քիչ չեր տեսել, թե մայրը
ձկան կերակրի վրա ինչպես եր հապալաս
գցում: Դրանից համեղ կերակուր եր ստաց-
վում: Նաստասյան ոջախի վրա չորացրած
ձկնկիթ խաւնած ու յեփած հապալասէ
բլիթներ ել եր սիրում: Թարմ հապալասը
յեղջերվի կաթով նույնպես համեղ եր: Պոր-
սայի հետ խառնած նույնպես լավ եր:

Նաստասյային վայրի սոխուկ, յեղևնու
ընկույզ և բեկտենու պառող ժողովելու ել
եյին ուղարկում: Բեկտենու պտուղը հենց
կորիզներով թխում եյին փոքրիկ տապակի
մեջ: Յեղևնու ընկույզները կեղկի հետ միա-
սին ծեծում ու թխում եյին: Իսկ վայրի
սոխուկը վորպես համեմունք եր ծառա-
յում:

Նաստասյայի և Միխայլոյի մայրը,
Մարիան, լավ խոհարարուհի յեր: Նրանից
շատ բան կարելի յեր սովորել: Նա կարողա-

նում եր կերակուրը համեղ ու բազմազան
ալատրաստել:


Յերբեմն նա յուրայիններին ոջախի վրա
պղնձում մսից, արյունից ու ալյուրից յե-
փած սուպ եր տալիս: Յերբեմն վասած
ածխի վրա կամ մոխրում խորոված՝ չմաք-
րած մեծ ձուկ, սկյուռ, ջրասամույր կամ
վորևե թոչուն եր տալիս: Խորլը, բուլղը,
փետուրներն ածխանում ու կերակրին առան-
ձին համ եյին տալիս: Յերբեմն նա վորևե
բան եր խորովում շամփուրով կամ ոջախի
սաստիկ տաքայած քարերի վրա: Յերբեմն
ել վորևե կենդանու ստամոքս եր պատ-
րաստում ու մատուցում: Ստամոքսը կրակի
վրա յեր կախում և այնքան թողնում, վոր
լավ ապխավում եր, վորից հետո նա
համեղ ուտելիք եր համարվում: Կամ ձվա-
ծեղ եր պատրաստում: Զանազան թոչուն-
ների ձու յեր գցում պղինձը, պինդ յեփած
ձվերը մանր կտրտում, խառնում եր յեղջերվի
ճարպի հետ և տապակում կրակի վրա:

Նաստասյան ամեն ինչ ուշադրությամբ
եր դիտում: Նա ուղում եր, վոր կանացի
բոլոր գործերն ինքն ել կատարել կարողանա:

— Ուրասայի համար նոր ծածկոց պետք
ե պատրաստել, — ասաց մեկ անգամ Մա-

լիան, — ձմեռային ծածկոց:
Մեր հինը բոլորովին ձեռքից
գնացել եւ:

Մեծ ուրասայի ծածկոցի
համար մոտ հիսուն յեղջե-
րամորթի յեղջերամորթի յեղջե-
րամորթի յեղջերամորթի յեղջե-
րամորթի յեղջերամորթի յեղջե-



գործով տունգումների մոտ կանայք են
զբաղվում:

Մարիան Նաստասյալին ցույց տվեց, թե
ինքն ինչպես եւ քերիչով մորթին ձևերեց
բաժանում: Սակայն այդ գործը մասնկական
ձեռքերի ուժի բան չեր: Նաստասյան քերեց,
քերեց, հետո ստիպված յեղավ թողնել:

Մարիան բոլորովին մաքուր քերեց մոր-
թին և դուրս բերեց դուրսը չորացնելու:
Չորացնելուց հետո կախեց, վոր ծխոտվի:
Դրանից մորթին ավելի փափկեց: Բայց
ավելի ևս պետք եր փափկացներ: Ճարպ
քսեցին, հետո սկսեցին ձեռքով ձգել ու տրո-
ւել Մորթին այնքան փափկեց, վոր ձեռքի
տակ ձգվում եր:

Նաստասյան այս բոլորը տեսնում ու
սովորում եր:

VII

Այդ յերկրում շատ խոշոր ու մանր դա-
շաններ եյին վկատում:

Յուրաքանչյուր տունգուս հենց բնատուր
վորսորդ եր:

Բայց յեղջերվի հոտերով հարուստները
սակավ եյին վորսի գնում: Յեղջերուներին
ինամելը ժամանակ ու տղամարդու ձեռք

Եր պահանջում, — սունդումների մոտ յեղազերուների հօգսն ամբողջովին տղամարդ։ կանց վրա յեր ընկած։

Յեղազերվի հոսանքն սկզբում Յեղորին բավական մնունդ եյին տալիս։ Այժմ պետք եր նաև վորսի մասին մտածել։

Ամառը միասին գնում եյին վայրի սազեր վորսալու։ Նրա համար շատ մարդ եր հավաքվում։ Սագերն ու մյուս ջրային թըռչունները մայիսի մեջերքն եյին գալիս այդ յերկիրը։ Մեկ ամսից հետո թուշունն սկսում եր փետրաթափ լինել։ Այդ ժամանակ կարելի յեր մեծ քանակությամբ վոչչաշնել նրան։

Գետափերում դարաններ եյին շինում, հետո սագերին շների ոգնությամբ դեպի այդ դարաններն եյին քցում։ Վախեցած թուչունը նեղում եր փոքրիկ, ցանկապատված տարածության մեջ։ Վորսորդների համար դըժվար չեր լինում փայտերով ջարդել նրանց։ Այսպիսով որական մի քանի հարյուր սագ եյին կոտորում։

Վորսը բաժանում եյին հավասար կերպով։ Վորսին մատնակցած Միխայլոն, ինչզես և մլուս յերեխաններն իրենց բաժինն եյին ստանում։ Տղաները հպարտանում եյին դրանով։

Սակայն իսկական վորսորդական սեգոնն ուշ աշնանն եր սկսվում։ Թակարդներ, վորոգալթներ, ինքնածիգ աղեղներ եյին սարքում։ Խոշոր գաղանների համար քողարկված փոսեր եյին շինում։ Մանր գաղանների, որինակ կղաքինների համար չարկաններ — ձըդ-

ված լարով աղեղ եյին գնում։ Նրա վրա դրված սլաքը մըճածե ծայր ուներ։ Փոքրիկ գաղանը, վորպեսզի ձեռք զցի այնտեղ դրված խանձը, անպատճառ պետք ե դիպահը այն բանին, վոր լարը ձգված եր պահում։ Մլաքն այդ դեպքում թուշում ու հարկածում եր գաղանին։ Այդ նրան կսպանի, բայց մորթին չի փչացնի։

Միխայլոն թափանցում եր վորսորդական այս վողջ իմաստության մեջ։ Նա գեռ վաղ յերեխայությունից եր դիտում վորսորդական պիտույքներն, իսկ այժմ նրա համար




իսկական վորսորդական գիտության ժամանակն եր հասել:

Այժմ արդեն պապի վոխարեն հայրն եր պատմում նրան վորսի ժամանակ իրեն կամ ուրիշներին պատահած զանազան դեպքերի մասին. նրան պատմում եր անցյալ ու ներկա ժամանակի վորսորդության զանազան տեսակների մասին: Միխայլոն լուս ու մտքումը պահում եր:

Յեգորը նրան պատմում եր, թե առաջ ինչպես եյին վայրի յեղջերուներ վորսում: Նրանք անթիվ, անհամար եյին: Պատահում եր՝ սպասում եյին, մինչև վոր վայրի յեղջերուների հոտն սկսում եր գետը լողալով անցնել: Մարդիկ նավակները ջուրն եյին իջեցնում ու սկսում եյին յեղջերուներին տեղերով ծակուել: Այսպիսով շատ-շատ յեղջերուներ եյին սպանում:

Այժմ վայրի յեղջերուներն զգալի կերպով վոչչացված են: Այժմ ձմեռն ու գարնանը դահուկներով նրանց յետերից են ընկնում և կոտորում են կամ նետերով կամ հրացանով: Ի՞նչ հաճույք՝ թոշել արագասլաց դահուկներով, այնքան մոտենալ արագավագ յեղջերվին, վոր կարողանաս նետահար անել նրան:

Վորսի մի ուրիշ աեսակն ել կա: Վայրի յեղջերվին հրապուրում են ընտանիներով: Յեղջերվին վայրի յեղջերուները միանում են Յեղջերվին, վորսորդն իր յեղջերուները ընտանիներին, վորսորդն իր վեղջերուները թագսոց գարձրած, գաղտագողի կերպով մոտենում ե իր վորսին ու կրակում ե վրան: Կայանին մոտ շատ աղվեսներ կային: Մեկ անգամ Յեղջերն աղվեսների հնաքը բլունեց, Նա մտքի մեջ ընկավ. — ինքնածիկ աղեղնել, թե աղվեսի համար թույն գցել Վըձուց թույն գցել:



Նա Միխայլոյին կանչեց և ցույց տվեց,
թե ինչպես պետք ե թույնով գնդիկներ
պատրաստել: Հետո նրա հետ միասին գնաց
աղվեսների հետքերի կողմը: Հեռվից նա
հետքերի մոտ իր գնդիկները թափթփեց,
դրանց հետ միասին ել՝ հրապուրելու համար
մասի կտորներ:

— Աղվեսն,—ասաց նա Միխայլոյին,—
իր հետքով յետ կվազի, մսի հոտը կառնի և
կսկսի ուտել: Թույնն ել հետը կուտի: Հենց
այդտեղ ել նրա վերջը կլինի:

Միխայլոն անհամբեր կերպով վորսի յեր
սպասում: Սակայն նրան ու հորը վիճակված
չեր աղվեսի մորթուց շահվել: Աղվեսը, թույնն
ուտելով, սատկեց, սակայն շուտով նրան ել
ուրիշ աղվեսներ կերան: Այդպես քիչ չե
պատահել: Բայց պատահում ել եր, վոր աղ-
վեսները սատկած աղվեսին քաշում, տանում
եյին իրենց բունը՝ վորպես պաշար:

— Հետո քեզ սկյուռի կտանեմ,—մեկ
անգամ ասաց հայրը Միխայլոյին: — Դու ար-
դեն նետով խփել ես սկյուռի: Հիմա յել
սովորիր հրացան կրակել:

Նրանք դահուկավորվեցին ու գնացին:
Կայանից հեռու գնալու միաք չունեյին,
այդ պատճառով ել ճանապարհի պաշար քիչ

վերցրին: Հետները շուն տարան: Միխայլոն սի-
րում ու փայփայում եր նրան: Նրան վերցրել
հյին լակոտ ժամանակը, և մեծացել եր Յե-
գորի ուրասայում: Յերբ հարևանից վերցրին,
վերջինիս, ըստ սովորության, ընծա տվին.
այլապես լակուից վորսի լավ շուն չեր գուրս
դալ: Տունգուսներն այսպես են հավա-
տում:

Յեգորն այս շանն առաջին անգամ սկյուռի
վորսի տարավ: Նրան պետք եր վարժեցնել
սկյուռի վորսի:

Ահա նրանց
վրա վերեկց,
ծառի վրայից
ձյուն թափվեց:
Հետո ել լը-
վեց, թե ինչ-
պես եր սկյու-
ռը ծառի ընի
վրա թոշկո-
տում՝ մագիլ-
ներով ծառից
կաչելով: Սկյու-
ռը ընով վեր
բարձրացավ և
կանգ առավ,



սկսեց մարդկանց ու շանը նայել: Յեգորը
հրացանը նշանի բռնեց ու կրակեց: Սկյուռն
անշացած ընկավ ծառի արմատների մոտ:
Յեգորը նրա մորթին հանեց, իսկ միսը
շանը գցեց: Շունն ագահությամբ վրա ընկավ
մսին ու կերպավ:

— Հիմա նա սկյուռի մսի համն իմա-
ցավ, — ասաց հալը Միխայլոյին, — այժմ
հենց վոր սկյուռ տեսնի, կակսի հաջել:

Շուտով նրանց նորից սկյուռ պատահեց:
— Այժմ դու կրակիր, — ասաց հայրը և
իր հրացանը տվեց Միխայլոյին: — Նշան բըռ-
նիր աչքին կամ կրծքի սև բծին:

Միխայլոն հրացան կրակելու մեջ անփորձ
եր: Նա հուզվում եր: Վրիպեց: Նա ամաչում
եր հորից ու շանից: Նա լուռ եր, բայց ինքն
իրեն մտածում եր.

«Աղեղի բութ ծայր ունեցող նետով ձեղ-
նից քանիսն եմ սպանել»:

Հանկարծ շունը հաջեց: Կանգնել ե ծառի
մոտ, գունը ցցել ե ու հաջում ե: Այ թե
վորտեղ ե յեկել սկյուռը: Միխայլոն նշան
բռնեց ու կրակեց: Այս անգամ հաջող ան-
ցավ: Սկյուռին ծառից վայր գցեց:

Այդ որը Միխայլոն մի քանի սկյուռ ել
սպանեց: Շանն, իր նեղության համար, մեկ

սկյուռ ել գցեցին: Մնա-
ցածները թողին իրենց:
Տունգու սներն սկյուռի
միսն ուտում են:

Միխայլոն հպարտ-
հպարտ կայան վերա-
դարձավ: Նա չափահաս
վորսորդից վոչ պակաս
մորթիներ ու ամբողջ
ընտանիքի համար միս
բերեց:

Միխայլոն վորսոր-
դական գիտությունն
այսպես անցավ: Իսկ
այս գիտությունը հա-
սարակ բան չեր: Գաղան
ու թոշուն սպանելը, թա-
կարդ ու վորոգայթ



Դնելը գեռ քիչ եր՝ Պետք եր վորսորդական
բոլոր կանոնները գիտենալ, Դրանք վոր-
սորդների համար պարտադիր են:

Ամենից առաջ պետք եր վորսը բաժա-
նել իմանալ:

Յերբ վորսորդը վայրի յեղջերու յե սպա-
նում, նա պետք ե վորսից բաժին տա հա-
րևաններին, այն ել վորոշ կանոններով:
Յեթե վորսորդը միայն մեկ հարևան ունի,
միսը յերկու հավասար մասի յեն բաժա-
նում, Յուրաքանչյուր հարևանի ընկնում ե
մեկ առաջին, մեկ յետեկի վոտ, գլխի, լեզվի,
սարդի, սրտի, ստամոքսի կեսը: Յեղջերվի
մորթին, բացի գլխից, տալիս են հարևանին,
իսկ գլխի կաշին վորսորդն իր համար ե
թողնում: Յեթե հարևանները միքանիսն են,
միսը հավասար բաժանում են նրանց մեջ:

Քարերում ապրող վայրի վոշխարներ
վորսալիս վորսորդը պարտավոր ե իր վորսը
բաժանել հարևանների հետ: Յեթե հարևան-
ներն իմանան, վոր վորսորդը միքանի վոշ-
խար ե սպանել, հետը կդնան վորսի տեղը,
և ամեն մեկն այնքան միս կվերցնի, վոր-
քան կարող ե հետը տանել:

Թոշուն խփեն, այս դեպքում ևս վորսը
պետք ե բաժանեն:

Դեռ շատ կանոններ կան, վոր վորսորդը
պետք ե կատարի, յեթե ցանկանում ե հա-
ջող գործ ունենալ:

Վորսի գուրս գալով Միխայլոյի հայրն
իր և վորդու վրա մաքրվելու արարողու-
թյուն կատարեց: Հետո դահուկներին վայրի
յեղջերվի ճարպ քսեց: Հետը վերցրեց նույն-
պես սամույլների և աղվեսների ոռուսկներն
ու ճանկերը: Վորպես թե գործի հաջողու-
թյունը նրանք են տվել:

Նա վորդուն այն ել եր սովորեցնում, թե՝
— Յեթե աղվես վորսաս, անպատճառ
կտրիր նրա դունչը ու յերեք որ պահիր:
Հետո ծառից կախ տուր: Աղվեսի միայն
մորթին վերցրու, իսկ միուր ծառի արանքը
կոխիր: Յերբ վայրի յեղջերու մորթես, տես,
վուների ու գլխի վոսկրները գետին չգլ-
ցես: Բոլորը միասին դիր վորևե ծառին
հարմարեցրած փայտի վրա: Յեղջերվի ատամ-
ները պահիր, — լավ մտածող կղառնաս:
Յերբ յեղջերու սպանես, մատաղ արա, —
ծառից կախիր գլխի վրայի կաշին, ճարպոս
ստամոքսը կամ մի այլ բան: Արծիվ յերբեք
չսպանես — վատ կլինի: Բոլոր գաղաններին
զգույշ վերաբերվիր: Ուշադիր յեղիր գեպի
գաղանը: Այլապես կհեռանա, կկորչի:

Տունգուսների համար այս սնոտիքը վոր-
սորդական գաղանացիտություն եր՝ Առանց
դրան, վորապրկն իր զբաղմոնքով հաջողու-
թյուն չեր ունենաւ:

Գաղանի հետ վարչել պետք ե գիտենալ:
Նա խելացի արարած ե: Գաղանը խորա-
մանկ ե ու խելացի — նույնիսկ մարդուց
ավելի խելացի: Նա այնպիսի բան գիտե,
վոր մարդը չգիտե: Ընտանի յեղջերուն,
որինակ, ամեն բան գիտե, նախատեսում ե
անհաջողություններն ու դժբախտություն-
ները: Յեթե վորսորդը վորսի յե պատրաստ
վում, և հենց այդ ժամանակ յեղջերուն
փոշտում ե, ավելի լավ ե տանը մնալ, հա-
ջողություն չպետք ե սպասել:

Յեթե արձիվ կամ ագռավ տեսնես,
դժբախտություն կպատահի: Յեթե ագռավ-
ները յերամերով են թոշում, յեղջերու-
ների ջարդ են նախագուշակում:

Շունը մարդու հավատարիմ բարեկամն
ու լնկերն եւ նրան պետք ե հարգանք ցույց
տալ: Նրան ծաղրել չի կարելի, վրադ դըժ-
բախտություն կրերես: Գայլերը յեղջերու-
փոխչացնողներն են: Սակայն նրանց սպա-
նել — վտանգավոր եւ Սպանած գայլի համար
գայլերի վողջ ցեղն ե վրիժառու դառնում:

Այսպես են հավատում տունգուսները:
Կենդանական աշխարհին այսպես են վերա-
բերվում նրանք:

VIII

Սակայն տունգուսների հավատով ամե-
նից նշանավոր գաղանն արջն եւ Ամենամեծ
հարգանքը նա յե վայելում:

Արջերն, ասում են տունգուսները, մար-
դուց են սկիզբ առել: Առաջին մայր արջը
վայրենացած աղջիկ ե յեղել: Արջը ճիշտ
նույնն ե, ինչ վոր մարդն ե, միայն թե
բութ մատ չունի: Նա ամեն բան հասկանում
ե: Տունգուսներն արջերի մասին պատմվածք-
ներ շատ ունեն: Ինչպես ե աղջիկն արջին
հյուրասիրելու փոխարեն հին ներքան (պա-
գոչ) գցել, և ինչպես ե վերջինս աղջկանից
վիրափորվել: Ինչպես ե մեկ անգամ արջը
մեկ ուրասա մտել, ուր տերը հյուրասիրել
ե նրան, և ուրիշ շատ բաներ:

Արջերն, ասում են տունգուսները, խոր-
հրդավոր ուժ ունեն: Արջի թաթը, վորպես
թե, ամեն տեսակ փորձանք ու դժբախտու-
թյուն վանում եւ: Այդ պատճառով ել այդ
թաթը պահում են ուրասայում: Պահպանում
են նաև մթերանոցում, վորպեսովի պաշար-

Ները չգողանան: Արջի թաթը կախում են
յեղերուների պարանոցից, վորպեսզի գայ-
լիքը հոտին ձեռք չտան: Ասում են նաև, թե
յերեխաներն որորոցում հանդիսատ կընեն,
յեթե որորոցում արջի թաթ դնեն:

Արու արջին տունգումները «պատիկ»,
իսկ եգին «տատիկ» են անվանում:

Միխայլոյի հայրը քիչ չեր արջի գնում:
Գնում եր տեղով, վորսորդական դանակով
ու հրացանով, Բայց Միխայլոյին հետը չեր
տանում: Նա գեռ շատ փոքր եր: Միխայլոն
շատ եր ուզում՝ վորքան կարելի յե շուտ
իսկական վորսորդ դառնալ, վոր արջի յել
կարողանար գնալ:

Մի քանի տարի անցավ: Միխայլոն
արդեն կիսաշափահաս մարդ եր: Մեկ ան-
գամ մի քանի մարդ հավաքվեցին արջին
վորջից դուրս հանելու: Նրանց հետ Յեգորն
ել գնաց: Միխայլոյին ել հետը տարավ:

Միխայլոն տոնական տրամադրություն
ուներ:

Վորջին հսկողը փորձված վորսորդ
իվանն եր: Նա կարողանում եր հետքով
գտնել արջի տեղերը: Պատահում եր, վոր
վորջին մոտենում եր բոլորովին անլսելի
կերպով: Անփորձ վորսորդի քայլերն ել բո-

լորովին ուրիշ տեսակ
են — նրանք միայն
խրտնեցնում են գա-
ղանին:

Ընդհուպ մոտեցան
վորջին: Աշխատում
եյին չաղմկել: Վորջի
մուտքը գերանով պինդ
փակեցին:



Վորքան ել աշխատեցին, արջն աղմուկը
լսեց և սկսեց վորջում դեսու-դեն ընկնել:

Այդ ժամանակ, արջին հանգստացնելու
համար, վորսորդներն սկսեցին աղաղակել.

— Մեր հայր, մենք քեզ հարգում ենք,
մեզնից մի վախենար: Սարսափելին, խնայիր
մեզ. սարսափելին, մեզմացիր: Մենք խղճուկ,
դժբախտ մարդիկ ենք:

Ամեն տեսակ խոսքերով շոյում եյին
արջին՝ վորպես կարելի յեր միայն մարդու
հետ խոսել: Աշխատում եյին համոզել, վոր
վրենք նրան շատ են հարգում: Միայն թե
հավատար իրենց ու չվիրավորվեր: Մինչդեռ
իրենք պատրաստվում ելին. — պինդ բռնել
եյին՝ վորը տեղը, վորը յերկար փայտին ամ-
րացրած լայն դանակը:

Արջն սկսեց դանդաղ դուրս սողալ վոր-
ջից: Սովորության համաձայն նրա վրա
առաջինն ավագ վորսորդը պետք է ընկներ:
Այս ել ե հարդանքի նշան՝ դեպի արջը:

Ավագը վորձված վորսորդ եր: Նա ձար-

պիկ կերպով իր տեղը խրեց արջի մեջ:

Սպանված արջն ընկած եր ձյունի վրա:
Վորսորդները խմբվել եյին շուրջը ու դի-
տում ելին նրան: Խոսում եյին վորսի ման-
րամասնությունների մասին:

Վերջապես մաքրելուն անցան: Այդ բանը
պետք եր կատարել համաձայն ծեսի: Միխայ-
լոն հետաքրքիր կերպով դիտում եր, թե
ինչպես են արջից նրա «հագուստը» հա-
նում: Տունգումները միշտ արջի մորթը
«հագուստ» են անվանում: Նրան այս խընդ-
րում մոտեցնում են մարդուն:

Նա, ով մաշկում ե արջին, մորթը, վոր-
պես նվեր ե ստանում: Իր հերթին նա յել
նվիրում ե սպիտակ յեղջերու սպանողի:

Մորթը համվեց: Այդ ժամանակ նրա
փորոտիքը մաքրողը կենդանու մեջքից շեր-
տերով պոկեց ճարպը և դրեց մորթի մեջ:
Հետո կտրեց գլուխը, կոկորդի հետ միասին,
սիրտը, լյարդը և թոքերը:

Հասավ հանդիսավոր ըոպեն: Մաքրողն
ու վորսի բոլոր մասնակիցները պետք ե
արջի սրտից մի-մի կտոր ուտելին:

Միխայլոն գիտակցում եր կատարվածի
վող կարևորությունը: Արջի սիրտն ուտե-
լով՝ նրանք յուրացնում ելին հզոր գազա-
նի հատկությունները: Կանայք չեն կարող
արջի սիրտ ուտել:

Սպանած արջի միսը սահնակով բերին
իրենց կայանը: Դրին փիճեկեղեկի մի կտորի
վրա, իսկ սահնակը կոտրտեցին:

Արջը ցած զրին՝ գունչը դեպի հին յեղենին, Ալդաեղել ի խարուկի վառեցին։ Կայանի բոլոր բնակիչները հավաքվեցին։

Հին սովորության համաձայն, արջի միսն ու վոսկըները բաժանեցին իրենց մեջ։ Հետո արջի պարանոցից սկսեցին ապօւր յեփել։ Այս պետք է պատրաստ լինել կես զիշերին մոտ։ Որն անցավ զրույցներով, խաղերով ու պարով։ Ուրախ երև և աշխույժ։

Ճիշտ կես զիշերին ագուավի կոավոց լսվեց — զա, զու, զա։

Կանչողները վորսորդներն եյին, վորոնք իրենց ձայնն ագուավների ձայնի եյիննմանեցնում։ Սրանով նրանք ուզում եյին խարել արջին, — իբր թե մարդիկը չեն, վոր պատրաստվում են նրա միսն ուտելու, այլ ագուավները։ Թող նրանցից ել պահանջի։

— Զա, զու, զա, — լսվում եր զիշերային լոռության մեջ։

Դրանով իմացնում եյին, թե ապօւրը պատրաստ եւ Այս կոչին խուրույկի մոտ սկսեցին ժողովվել կայանում ապրող ընտանիքների ավագ անդամները։ Պատշաճ կերպով նրանք նստեցին խարույկի մոտ և լուս սկսեցին ուտել։ Կերան և լըջմիտ կերպով ցրվեցին դեպի ուրասաները։

Այսպես վերջացավ արջատոնի տոաջին որը։

Հաջորդ որն առավոտից հին յեղենու մոտի խարույկի վրա սրբազն կերակուր եյին պատրաստում, — արջի տաքացրած ճարպի մեջ նրա մանը կտրտած փորոտիքն եյին յեփում։ Այդ ժամանակ ուրասաներում յեռանդագին յեփ ու թափ եր։ Տանտիկիններն աշխատում եյին ավելի համեղ կերակուր պատրաստել։ Սակայն տանու յեփվածքն ուտելը դեռ թույլ չեր տրվում մինչև սրբազն կերակուրը չուտպիր։

Յերիտասարգությունն ամբողջ որը խաղ ու պարով անցկացրեց։ Յեկ ճիշտ կես զիշերին դարձյալ հնչեց զա, զու, զա ճիչը։

Այս անգամ նույն ագուավային ճիչով պատասխանեցին տոնակատարությանը բոլոր մտանակցողները։ Կարծես ագուավների մի մեծ յերամ եր խնճույքի ժողովելը։

Գիշերվա մթության մեջ մարդիկ ժողովվեցին հին յեղենու մոտի խարույկի մոտ նրանք իրար «ագուավ» անունով եյին կոչում։ Նրանց յերեսներին պղինձների մուր եր քաած։ Նրանք այսպես եյին համոզված, թե իրենց սպանած հզոր զազանը կկարծի, թե նրանք վոչ թե մարդիկ, այլ թռչուններ են։

Նստուաեցին խարույկի շուրջը: Դեպի վեր
բարձրացող բոցը լուսավորում եղ սև, մրոտած
յերեսները: Նրանց աչքերը փայլում եյին:
Ուտում եյին առանց շտապելու, պատկառան-
քով դեպի սրբազն կերակուրը:

Վերջապես պղնձում ինչ վոր կար՝ բոլորը
կերան: Դրանից հետո ցրվեցին դեպի իրենց
բնակարանները: Այնտեղ նրանց հյուրամիրու-
թյուն եր սպասում, Յուրաքանչյուր ուրասա-
յում շատ կերակուրներ եյին պատրաստված:
Յեվ քեզն սկսվեց:

Վրա հասավ տոնակատարության յերրորդ
որը: Արջի մսով լի պղինձներն առավոտից
յեփում եյին:

Յերեկոյան արջի գլուխը դրին կեչի կե-
ղի վրա և սկսեցին զարդարել նրան: Սան-
րեցին կեղևե սանրով, ականջներին ողեր անց-
կացրին՝ յեղննու ասեղնատերեկից: Դույնըզ-
գույն ժապավեններով զարդարեցին:

Միաւժամանակ անցնելուց հետո գլխից
մորթին հանեցին ու սկսեցին գլխից կերա-
կուր յեփել: Կերակուրն ուղիղ կեսպիշերին
պատրաստվեց: Նորից ձայն տվին իրար՝ ադ-
ուավի պես կուավելով: Յեվ հավաքվածները
նորից սկսեցին ուտել մեծ հարգանքով:


Հետո ծնոտներն ու վուկըները դարսե-

ցին մի կտոր կեղևի վրա: Այստեղ դրին նաև
այն սանրը, վորով սանրել եյին արջի գլուխը,
գնդերն ու մյուս զարդերը: Յեվ հանդիսա-
վոր կերպով տարան կայանից դեպի արե-
մուտք: Ընտրեցին հին յեղնին ու նրանից
կախ տվին արջի՝ մնացորդները:

Վերադարձան կայանը և սպանած արջի
համար այրունության արին: Իրենց համար
ել մաքրման ծես կատարեցին:

Այսպիսի պա-
տիվսերով հարզե-
լով արջին՝ նրա
թաղումը կատա-
րեցին:

Միխայլոն
իրեն հանդիսա-
վոր գրության
մեջ եր զգում:
Արջատոններն ու
թաղումը նրա
համար նորու-
թյուն չելին: Ի-
րենց կայանում
նրա կյանքում
միայն մեկ ան-
գամ չեր, վոր տո-



նում եյին հաջող արջորսը: Բայց այդ առաջին արջն եր, վորի վորսին նա գնաց: Նա մասնակցեց արջի սպանությանը: Արջը կարող եր նեղանալ նրանից, ինչպես նաև նրա հետ յեղող բոլոր մարդկանցից: Արջը հզոր գաղան եւ: Նա խորհրդավոր ույժի տեր եւ Նա կարող եր վրեժ առնել վորսորդներից՝ խլելով նրանց վորսորդական յերջանկությունը:

Բայց այժմ նա հաշտված եւ: Հնուց սահմանած բոլոր ծեսերը պահված եյին: Արջի թաղումը պատվավոր կերպով եյին կատարել: Այժմ սպանած արջը բարյացակամ եթ նրանց նկատմամբ: Նա նրանց զբաղմունքին հաջողություն կուղարկի:

Յեվ Միմայլոն միայն այժմ զգաց, վորինքն իսկական վորսորդ եւ գարձել:



Հանձնված ե արտադրության նոյեմբերի 10 ին. - Ստորագրված ե տպերու գեկտեմբերի 2-ին 1931 թ. Ստատ. Փ. Ա. Հրատ. Ա. 3489. Պատվիր Ա. 492. Տիրաժ 4000

Уполномоченный О - 1819. Тип. армянского краевого из-во
„ГРО“ Ростов-Дон. Ворошиловский пр., № 27.

ՀՀ Ազգային գրադարան



NL0383630

497² 3523

ԳԻՒԾ 50 ԿԱՊ.

В. ХАРУЗИНА

ТУНГУСЕНОК МИХАИЛО

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ



ԱՐՄԵՆԳԻԶ—ԵՐԵՎԱՆ